Դատական Գործ N: ԵՇԴ/0599/02/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	22-05-2009
Հայցվոր/դիմող	
Անուն:	<<Նատալի էքսպորտ>> ՍՊԸ
Հասցե:	Հարավ Արևմտյան թաղամաս Բ-2 շ.85բն.36
Ներկայացուցիչ	
Անուն	Տիգրան
Ազգանուն	Մարտիրոսյան
Հասցե	Ավան-Առինջ 1/7շ.բն.15
Սեռ	Արական
Պատասխանող	
Անուն:	<<Ինտերմիլկ>> ՀՁ ՍՊԸ
Հասցե:	Չեխովի փող.35շ.բն.3
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Ապրանքային նշանի ապօրինի օգտագործումն արգելելուվ պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.5
Պետական տուրք:	4000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	

Ամսաթիվ:	22-05-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Շենգավիթ
Դատավորի անուն:	Նաիրա Գևորգի Հովսեփյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Շենգավիթ
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	22-05-2009

Դատաքննության ամսաթիվ:	10-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	25-05-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	

Դատաքննության ամսաթիվ:	29-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	10-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	9-30
Նիստերի դահլիճի համար:	6

Դատաքննության ամսաթիվ:	11-08-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	15
Նիստերի դահլիճի համար:	6

Հայցի լուծման ամսաթիվ:	11-08-2009
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր-ի 130-132
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ (վճիռ, որոշում):	ԵՇԴ/599/02/08 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով Նախագահող դատավոր Ն.Հովսեփյան Քարտուղար Ս.Նալբանդյան Հայցվորի ներկայացուցիչ՝ Ա.Գալոյան Պատասխանողի ներկայացուցիչ՝ Ա.Մարկոսյան 2009թվ. օգոստոսի 11-ին Երևանում,Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում Դռնբաց դատական նիստում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի «Նատալի էքսպորտ» ՍՊԸ-ի ընդդեմ «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ի ապրանքային նշանի ապօրինի օգտագործումն արգելելու պահանջի մասին: Հայցվորի ներկայացուցիչ Արարատ Գուրգենի Գալոյանը/

ծնվ.30.01.1975թվ. անձ. ԱՖ 0710930, տրվ. 22.05.2003թվ. 004-ի կողմից, հաշվ. Երևան, կիևյան փող. 4շ. թիվ 16բն., լիազորագիր տրվ. 15.05.2009թվ. «Նատալի էքսպորտ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Ստեփանյանի կողմից / հայտնեց դատարանին, որ հայցվորը 04.10.2007թվ. և 19.09.2008թվ. օրենքով սահմանված կարգով տարբեր ապրանքային դասերում գրանցել է «Մայա Սեմյա» ապրանքային նշանը գ•րանցման թիվ 12096 և թիվ 13254/:Պատասխանողը խախտելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծա•ման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ,4, 22, 47հոդվածների պահանջները հայցվորի թույլտվության կամ լիազորման բացակայության պայմաններում ներմուծել և վաճառել է հայցվորին պատկանող վերը նշված ապրանքային նշանին նման ապրանքները, վերջինը 17.11.2008թվ . դիմել է պատասխանողին խնդրելով դադարեցնել օրենքի խախտումը, սակայն նա առ այսօր որևէ գործողություն չի կատարել և այդ հանգամանքից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քաղ.դատ.օր-ի 2, 87, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4, 470հոդվածների պահանջներով ինքը խնդրում է դատարանին արգելել «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ի կողմից «Նատալի էքսպորտ» ՍՊԸ-ին պատկանող «Մայա Սեմյա» ապրանքանիշի/գրանցման համարներ՝ թիվ 120996 և թիվ 13254/ ապօրինի օգտագործումը:
Պաատասխանող «Բլենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Մարկոսյանը/ծնվ. 13.05.1970թվ., անձն.ԱԱ 0291049 տրվ. 26.12.1995թվ. 004-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 20.05.2011թվ., հաշվ. Երևան. Դավիթաշեն, 3-րդ թաղ. 12շ. թիվ 71բն., լիազորագիր տրվ. 28.07.2009թվ.«Բլենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հարությունյանի կողմից/ չառարկեց հայցի դեմ, ասելով, որ « Բլենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ն հանդիսանում է «Ինտերմիլկ» ՀՁ ՍՊԸ-ի իրավահաջորդը և նրա կողմից արդեն դադարեցվել է ապրանքանիշի ապօրինի օգտագործումը:
Դատարանը լսելով կողմերի ներկայացուցիչներին, ուսումնասիրելով քաղ.գործի նյութերը, պարզեց, որ հայցը հիմնավորված է և ենթակա բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.
Հայցվորը 04.10.2007թվ. և 19.09.2008թվ. օրենքով սահմանված կարգով տարբեր ապրանքային դասերում գրանցել է «Մայա Սեմյա» ապրանքային նշանը/•րանցման թիվ 12096 և թիվ 13254/:Պատասխանողը հայցվորի թույլտվության կամ լիազորման բացակայության պայմաններում խախտելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծա•ման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 2, 4, 22, 47հոդվածների պահանջները ապօրինի օգտագործել է հայցվորի կողմից գրանցված «Մայա Սեմյա» ապրանքային նշանը և նման պայմաններում դատարանն արձանա•րում է, որ պատասխանողին պետք է արգելել «Նատալի էքսպորտ» ՍՊԸ-ին պատկանող «Մայա Սեմյա» ապրանքանիշի օգտագործումը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղ.դատ.օր-ի 130-132 հ.հ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել: Արգելել պատասխանող «Բլենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ին «Նատալի էքսպորտ» ՍՊԸ-ին պատկանող «Մայա Սեմյա» ապրանքանիշի /•րանցման համարներ՝ թիվ 120996 և թիվ 13254/ ապօրինի օգտագործումը:
Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից պարտապանի հաշվին:
Վճիռն ենթակա է բողոքարկման հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում Վերաքննիչ քաղաքացիական դատարանին:

	ԴԱՏԱՎՈՐ Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	11-08-2009
Ամսաթիվ:	11-09-2009
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	30-09-2009
էջերի քանակը:	54
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	30-09-2009
էջերի քանակը:	54
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Ամսաթիվ:	29-10-2009
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	Վճռի վրիպակը, գրասխալը կամ թվաբանական սխալը ուղղելու վերաբերյալ
Ում կողմից է ներկայցվել:	
Նշանակվել է դատական նիստ:	
Միջնորդության ընթացքը:	
Որոշումը:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	30-11-2009
էջերի քանակը:	83
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	30-11-2009
էջերի քանակը:	83
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 19 Մայիս 2011